ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հունվարի 2017 թվականի N 6-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել «Հին Ջրվեժ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Մարգարիտ Բունիաթյան, Ջրվեժի 17-րդ փողոցի թիվ 2/1 հասցեում 2017 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացմամբ:

2. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2017 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով.

1) Անուշ Ղազարյանին, Ջրվեժի 12-րդ փողոցի թիվ 72 հասցեում,

2) Թամարա Գրիգորյանին, Ջրվեժի 12-րդ փողոցի թիվ 74 հասցեում:

3. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

4. Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հունվարի 17
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունվարի 2017 թվականի N 7-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ և 12-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել «Գյուլումյաններ հայր և որդի» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Մինաս Գյուլումյան, Ջրվեժի 15-րդ փողոցի թիվ 1 հասցեում 2017 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ և տեղադրելու արտաքին գովազդ 15-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող շինության հարակից տարածքում:

2. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2017 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով.

1) Կարինե Կարոյանին, Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 46 հասցեում,

2) Արլետտա Մելիքյանին, Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 49 հասցեում,

3) Մարգարիտ Կարապետյանին, 6-րդ փողոցի թիվ 31 հասցեում,

4) Կարինե Սարդարյանին, 49-րդ փողոցի թիվ 1/1 հասցեում:

3. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

4.Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հունվարի 18
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունվարի 2017 թվականի N 8-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Էմմա Ասատուրի Բարբարյանի (ծնված՝ 1970 թվականի մայիսի 18-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ 2-րդ թաղամասի թիվ 22 հողամասում (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14022013-07-1753, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2013 թվականի փետրվարի 14-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 29-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Էմմա Ասատուրի Բարբարյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ 2-րդ թաղամասի թիվ 22 հողամասում 2005 թվականին ինքնակամ կառուցել է այգետնակ և բաց պատշգամբ 1-ին հարկում՝ 70,91 քառ.մետր, այգետնակ և բաց պատշգամբ 2-րդ հարկում՝ 108,52 քառ.մետր, այգետնակ ձեղնահարկում՝ 99,31 քառ.մետր, զուգարան՝ 16,27 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 5,93 քառ.մետր, ծածկ՝ 10,55 քառ.մետր, ջրավազան՝ 19,41 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Էմմա Ասատուրի Բարբարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ 2-րդ թաղամասի թիվ 22 հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Էմմա Ասատուրի Բարբարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ 2-րդ թաղամասի թիվ 22 հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական և գույքին տրամադրել նոր հասցե՝ գյուղ Ջրվեժ, Այգեգործական 2-րդ թաղամաս, թիվ 22:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 806 094 (ութ հարյուր վեց հազար իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հունվարի 18
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունվարի 2017 թվականի N 9-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ և 12-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել ստորև նշված ՍՊԸ-ներին և անհատ ձեռնարկատերերին 2017 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ.

1) «Նորայր և Ավետիք» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Աշոտ Ավետիքի Սանթրոսյան, Ջրվեժի 2-րդ դաշտի թիվ 6/17 հասցեում,

2) «ՎԱՐԴԼԵՆ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Լենա Ղարիբի Պողոսյան, Ջրվեժի 2-րդ թաղամասի թիվ 7/1 հասցեում,

3) «ՌՈՅԱԼ ԳԼԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Հայկ Պավլիկի Բարսեղյան, Ջրվեժի 2-րդ դաշտի թիվ 7/9-10 հասցեում,

4) «ՎԻԳԵՆ-ՎԻԼԵՆ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Արման Աբգարի Հովհաննիսյան, Ջրվեժի 2-րդ դաշտի թիվ 6/19 հասցեում,

5) անհատ ձեռնարկատեր Անուշ Արշակի Մանուկյանին, Ջրվեժի 15-րդ փողոցի թիվ 8 հասցեում:

2. Թույլատրել ստորև նշված ՍՊԸ-ներին և անհատ ձեռնարկատերերին 2017 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով.

1) «ԿՈՄՍԱԼ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Արամ Աշոտի Ալիխանյան, Ջրվեժի 20-րդ փողոցի թիվ 3 հասցեում,

2) անհատ ձեռնարկատեր Անժելիտա Ալեքսանյանին, Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 81 հասցեում,

3) անհատ ձեռնարկատեր Կուրգին Գառնուկի Խումարյանին, Ջրվեժի 18-րդ փողոցի թիվ 21 հասցեում,

4) անհատ ձեռնարկատեր Սուսաննա Շամյանին, Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 32/1 հասցեում,

3. Թույլատրել «ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ-ին, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ալինա Աղաբեկյան, Ջրվեժի 2-րդ թաղամասի թիվ 5/34 և 5/35 հասցեի հողամասին հարակից տարածքում տեղադրելու արտաքին գովազդ:

4.Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

5. Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հունվարի 19
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունվարի 2017 թվականի N 10-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանին, Ջրվեժի 2-րդ դաշտի թիվ 6/13 հասցեում 2017 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ:

2. Թույլատրել «ԼԱՎԻԼԱ» ՍՊԸ-ին, տնօրեն Արարատ Վարուժանի Մարտիրոսյան, Ջրվեժի 15-րդ փողոցի թիվ 10-12 հասցեում 2017 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացմամբ և որպես հանրային սննդի օբյեկտ՝ տալ ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվություն:

3. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին 2017 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով.

1) Սիրուն Գարուշի Համբարյանին, Ջրվեժի 6-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 2 հասցեում,

2) Անժելիա Սամսոնի Փիլոյանին, Ջրվեժի 10-րդ փողոցի թիվ 16 հասցեում,

3) Աննա Սմբատի Սահակյանին, Ջրվեժի Մելքոնյան փողոցի թիվ 58 հասցեում:

4. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

5.Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հունվարի 20
գ. Ջրվեժ